ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

18.04.2023 17:02

Փաստաբանների պալատը հյուրընկալել էր Եվրասիա միջազգային համալսարանի ուսանողներին:

Ողջունելով ուսանողներին՝ Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Լուսինե Սարգսյանը մանրամասն ներկայացրել է փաստաբանի դերն արդարադատության համակարգում, փաստաբան դառնալու ընթացակարգը, ինչպես նաև պատասխանել ուսանողների տարբեր հարցերի:

Ճանաչողական այցի շրջանակներում ուսանողներն անմիջականորեն ծանոթացել են նաև Փաստաբանների պալատի, Հանրային պաշտպանի գրասենյակի և Փաստաբանական ակադեմիայի գործառույթներին ու կառուցվածքին՝ շրջելով Փաստաբանների պալատի վարչական շենքում:

Շրջայցը եզրափակվել է Հանրային պաշտպանի գրասենյակում, որտեղ գրասենյակի ղեկավարի տեղակալ Էդգար Գրիգորյանը ներկայացրել է հանրային պաշտպանության կարևորությունն ու հանրային պաշտպանների գործունեության առանձնահատկությունները:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })